ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ավստրիայի Հանրապետություն (Վիեննա) գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.**

Անի Թաթոյան, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հավասար հնարավորությունների ապահովման վարչության մարդկանց թրաֆիքինգի և կանանց հիմնահարցերի բաժնի ավագ մասնագետ:

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**

Ավստրիա, Վիեննա, 2025 թվականի սեպտեմբերի 9-ից 12-ը:

3. **Հրավիրող կողմը.**

Պրահյան Գործընթացի քարտուղարություն, Միջկառավարական Միգրացիոն Քաղաքականության Զարգացման Կենտրոն (ICMPD):

4. **Գործուղման նպատակը.**

Գործուղման նպատակն էր մասնակցել Պրահայի գործընթացի կողմից կազմակերպված «Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի» թեմայով աշխատաժողովին՝ ուսումնասիրելու միջազգային իրավական և ինստիտուցիոնալ փորձը, զարգացնելու մասնագիտական կարողությունները և խթանելու Հայաստանի մասնակցությունը տարածաշրջանային և բազմակողմ համագործակցության հարթակներում: Աշխատաժողովը հնարավորություն ընձեռեց խորությամբ անդրադառնալ մարդկանց թրաֆիքինգի կանխարգելման, զոհերի պաշտպանության և բազմակողմ համագործակցության հիմնական գործիքակազմին:

5. **Քննարկված թեմաները.**

1) **Մարդկանց թրաֆիքինգի և միգրացիայի փոխկապակցվածությունը.** քննարկվեցին թրաֆիքինգի, միգրացիայի և ապաստանի իրավունքի համընկնող ու հակասական ոլորտները, ինչպես նաև աշխատանքի միգրացիայի ընթացքում օրենսդրական խախտումների և շահագործման վտանգները:
2) **Թրաֆիքինգը և կիբեռհանցավորությունը.** անդրադարձ կատարվեց առցանց հավաքագրման և շահագործման մեխանիզմներին, ինչպես նաև իրավապահ մարմինների առջև ծառացած իրավական և տեխնիկական մարտահրավերներին:
3) **Բազմակառույց համագործակցությունը (multi-agency approach).** ներկայացվեցին թրաֆիքինգի դեմ արդյունավետ պայքարի համար անհրաժեշտ միջգերատեսչական համագործակցության գործիքները:
4) **Ազգային և տարածաշրջանային ուղղորդման մեխանիզմներ (NRM/TRM).** քննարկվեց զոհերի նույնականացման, պաշտպանության և աջակցման գործընթացների կարգավորումը և բազմակողմ դերակատարների ներգրավվածության ապահովումը:
5) **Կանխարգելում.** դիտարկվեցին իրազեկման և կանխարգելման երեք մակարդակները, արդյունավետ փորձառական մեթոդները և հասարակության մասնակցության կարևորությունը:
6) **Մեդիայի դերը.** առանձնահատուկ տեղ հատկացվեց լրատվամիջոցների մասնակցությանը թրաֆիքինգի դեմ պայքարի և հանրային իրազեկման գործընթացներում:
7) **Զոհերի աջակցության ծրագրերը.** ներկայացվեցին պետության և հասարակական կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունները՝ սոցիալական, հոգեբանական և իրավական աջակցություն, ինչպես նաև զոհերի վերաինտեգրման և վերասոցիալականացման փորձառական մոտեցումները:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Աշխատաժողովի ընթացքում անցկացվեցին ինչպես տեսական, այնպես էլ գործնական քննարկումներ: Մասնակիցները ներգրավված էին աշխատանքային խմբերի շրջանակում, որտեղ ներկայացվում էր իրենց երկրների փորձառությունը, բարձրացվում էին առկա մարտահրավերները և առաջարկվում էին հնարավոր լուծումներ:

Աշխատանքային խմբերի շրջանակում մասնակցություն ունեցա թրաֆիքինգի և աշխատանքի շահագործման դեպքերի վերլուծությանը: Քննարկումների ընթացքում ներկայացրի Հայաստանի փորձը՝ ընդգծելով իրազեկման ծրագրերը, ինչպես նաև զոհերի աջակցության և պաշտպանության գործող մեխանիզմները:

Առանձնահատուկ կարևորություն ունեցավ զոհերի պաշտպանությանը նվիրված քննարկումը: Իմ կողմից ներկայացվեց Հայաստանի կողմից կատարված առաջընթացը զոհերի նույնականացման և սոցիալական աջակցության ոլորտներում, ինչպես նաև անդրադարձ կատարեցի այն մարտահրավերներին, որոնք առկա են պետական և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների համագործակցության գործընթացում:

Աշխատաժողովի եզրափակիչ օրը իրականացվեց այցելություն Ավստրիայի Համատեղ Օպերացիոն Գրասենյակ (Joint Operational Office – JOO), որի շրջանակում ծանոթացանք ինչպես Ավստրիայի ներպետական համակարգի առանձնահատկություններին, այնպես էլ միջազգային համագործակցության գործելակերպին:

Բացի այդ, տեղի ունեցան հանդիպումներ ԼԵՖՕ-ԻԲՖ (LEFÖ – Intervention Centre for Trafficked Women, Կանանց թրաֆիքինգի զոհերի միջամտության կենտրոն) և MEN VIA հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Որոշումներ, պայմանավորվածություններ կամ փաստաթղթեր չեն ընդունվել և չեն ստորագրվել:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Առաջարկություններ չկան:

Անի Թաթոյան

17.09.2025թ.